Ներկայումս մայրաքաղաքի գիտական, կուլտուրական, ուսումնական հիմնարկներում, արտադրական ձեռնարկություններում տեղի են ունենում ջերմ հանդիպումներ Ստալինյան մրցանակի լաուրեատների հետ։ Մեր աշխատավորները և ուսանողները հնարավորություն են ունենում մոտիկից ծանոթանալու գիտության և կուլտուրայի առաջավորների կյանքին և ստեղծագործությանը։ Ստալինյան մրցանակի արժանացած գիտնականներին և դերասաններին իրենց մոտ են հրավիրում կոլխոզնիկները, որոնք հետաքրքրվում են սովետական գիտության նվաճումներով։

ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՄԱՀԸ

Երկարատև հիվանդությունից հետո, փետրվարի 10-ին, Թբիլիսի քաղաքում վախճանվեց անմահ «Անուշ» օպերայի կախարդող վարպետ Արմեն Տիգրանյանը։

Արմեն Տիգրանի Տիգրանյանը ծնվել է Ալեքսանդրապոլ (ներկայումս Լենինական) քաղաքում 1879 թվին։ Նա իր երաժշտական կրթությունը ստացել է Թբիլիսիում ռուս հայտնի կոմպոզիտոր Ն. Կլինովկու մոտ։

1902 թվին Տիգրանյանը հաստատվում է իր ծննդավայրում, ուր և կազմակերպում է քառաձայն երաժշտական խումբ։ 1907 թվին Տիգրանյանը ձեռնամուխ է լինում իր ստեղծագործությունների գլուխ գործոցի՝ «Անուշ»ի ձայնագրմանը, որը և առաջին անգամ, հատվածաբար, սիրողների ուժերով, ներկայացվում է Ալեքսանդրապոլում։ Հետագա տարիներին նա նորից անդրադառնում է իր այս աշխատությանը և ավելի մշակում ու կատարելագործում։

Տիգրանյանը ավելի ժողովրդականացավ և իր փառքի բարձրությանը հասավ սովետական տարիներին, երբ նրա «Անուշ» օպերան, որպես ժողովրդից սիրված մի գործ, սկսեց հաճախակի բեմադրվել Սովետական Հայաստանի և հարևան հանրապետությունների թատրոններում։

Հայրենական պատերազմի տարիներին, Տիգրանյանը աշխատել է «Դավիթ բեգ» հերոսական օպերայի վրա և ավարտել այն։ Այդ օպերան կներկայացվի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում։

ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Տիգրանյանն իր երաժշտական հարուստ և բարձրարժեք ժառանգությամբ անմահ կմնա սերունդների հիշողության մեջ։